

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՌՈՒՅՑ

Սույնով Անդամները համաձայնում են հետևյալի մասին.

Ա. Նպատակներ

i) Առևտրային քաղաքականության վերաքննության գործակառույցի (ԱՔՎԳ) նպատակն է՝ Անդամների առևտրային քաղաքականություններում ու գործելակերպերում ավելի մեծ թափանցիկության հասնելու և դրանք ավելի լավ հասկանալու միջոցով նպաստել այն բանին, որ բոլոր Անդամները պահպանեն Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերով և համապատասխան դեպքում՝ Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերով ստանձնված կանոնները, հիմնադրույթներն ու պարտավորությունները, և այդպիսով ավելի սահուն դառնա առևտրի բազմակողմ համակարգի աշխատանքը: Համապատասխանաբար, վերաքննության գործակառույցը թույլ է տալիս հավաքական կերպով ըմբռնել ու գնահատել Անդամի առևտրային քաղաքականության միջոցների ու գործելակերպերի ամբողջական ծավալն ու դրանց ազդեցությունը առևտրի բազմակողմ համակարգի աշխատանքի վրա: Այնուամենայնիվ, այն նախատեսված չէ հիմք ծառայելու Համաձայնագրերով ստանձնված առանձին պարտավորությունների կիրարկման կամ վեճերի կարգավորման ընթացակարգերի համար կամ Անդամների վրա քաղաքականությանն առնչվող նոր պարտավորություններ դնելու համար:

ii) Վերաքննության գործակառույցի ներքո իրականացվող գնահատումը կատարվում է՝ հաշվի առնելով տվյալ Անդամի տնտեսական ու զարգացման կարիքների, քաղաքականության միջոցների և նպատակների համընդգրկուն պատկերը, ինչպես նաև դրա արտաքին միջավայրը: Այնուամենայնիվ, վերաքննության գործակառույցի խնդիրն է քննության առնել Անդամի առևտրային քաղաքականության միջոցների ու գործելակերպերի ազդեցությունը առևտրի բազմակողմ համակարգի վրա:

Բ. Ներքին թափանցիկություն

Անդամներն ընդունում են առևտրային քաղաքականության հարցերի վերաբերյալ կառավարության որոշումների կայացման ներքին թափանցիկությանը ներհատուկ կարևորությունը և Անդամների տնտեսությունների, և առևտրի բազմակողմ համակարգի համար, և համաձայնում են խրախուսել ու խթանել թափանցիկությունն իրենց սեփական համակարգերի ներսում՝ ընդունելով, որ ներքին թափանցիկության իրականացումը պետք է կատարվի կամավոր հիմունքով և հաշվի առնի յուրաքանչյուր Անդամի իրավական ու քաղաքական համակարգերը:

Գ. Վերաքննության ընթացակարգեր

i) Սույնով ստեղծվում է Առևտրային քաղաքականության վերաքննության մարմին (ԱՔՎՄ)՝ իրականացնելու առևտրային քաղաքականության վերաքննություններ:

ii) Բոլոր Անդամների առևտրային քաղաքականության միջոցներն ու գործելակերպերը ենթակա են պարբերական վերաքննության: Վերաքննությունների հաճախականությունը որոշելու հարցում վճռորոշ գործոն կլինի առևտրի բազմակողմ համակարգի վրա առանձին Անդամի ունեցած ազդեցությունը, որը սահմանվում է ըստ համաշխարհային առևտրում՝ վերջին հատկանշական ժամանակահատվածում նրանց ունեցած բաժնեմասի: Այս կերպ որոշված առաջին չորս առևտրային միավորները (Եվրոպական համայնքները հաշվելով որպես մեկ) ենթակա են վերաքննության երկու տարին մեկ: Հաջորդ 16-ը վերաքննվում են յուրաքանչյուր չորս տարին մեկ: Մյուս Անդամները վերաքննվում են յուրաքանչյուր վեց տարին մեկ, բացառությամբ, որ ավելի երկար ժամանակահատված կարող է սահմանվել առավել թույլ զարգացած Անդամ երկրների համար: Հասկանալի է, որ այն միավորների վերաքննությունը, որոնք ունեն մեկից ավելի Անդամներ ընդգրկող ընդհանուր արտաքին քաղաքականություն, ընդգրկում է առևտրի վրա ազդող քաղաքականության բոլոր բաղկացուցիչները, ներառյալ՝ առանձին Անդամների համապատասխան քաղաքականության միջոցներն ու գործելակերպերը: Բացառապես այն դեպքերում, երբ Անդամի առևտրային քաղաքականության միջոցների և գործելակերպերի փոփոխությունները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ իր առևտրային գործընկերների վրա, ԱՔՎՄ-ն կարող է, խորհրդակցելուց հետո, տվյալ Անդամից պահանջել ավելի վաղ ժամկետ տեղափոխել իր հերթական վերաքննությունը:

iii) ԱՔՎՄ-ի ժողովներում քննարկումները ղեկավարվում են «Ա» կետում սահմանված նպատակներով: Այդ քննարկումների կենտրոնում պետք է լինեն Անդամի առևտրային քաղաքականության միջոցներն ու գործելակերպերը, որոնք ենթակա են գնահատման վերաքննության գործակառույցի ներքո:

iv) ԱՔՎՄ-ն վերաքննությունների անցկացման համար կազմում է հիմնական ծրագիր: Այն կարող է նաև քննարկել Անդամներից ստացված թարմացված գեկուցագրերն ու դրանք ընդունել ի գիտություն: ԱՔՎՄ-ն յուրաքանչյուր տարվա համար վերաքննությունների անցկացման ծրագիր է կազմում՝ խորհրդակցելով ուղղակիորեն գործին առնչվող Անդամի հետ: Վերաքննության ենթակա Անդամի կամ Անդամների հետ

խորհրդակցելով, Նախագահը կարող է քննախոսներ ընտրել, ովքեր՝ գործելով իրենց անձնական իրավասության սահմաններում, բացում են քննարկումները ԱԲՎՄ-ում:

v) ԱԲՎՄ-ն իր աշխատանքը հիմնում է հետևյալ փաստաթղթերի վրա.

ա) «Գ» կետում հիշատակված ամբողջական զեկուցագրի, որը տրամադրում են վերաքննության ենթակա Անդամը կամ Անդամները.

բ) զեկուցագրի, որը կազմում է Քարտուղարությունն իր սեփական պատասխանատվությամբ՝ հիմնվելով իրեն մատչելի և տվյալ Անդամի կամ Անդամների տրամադրած տեղեկությունների վրա: Քարտուղարությունը պետք է ձգտի տվյալ Անդամից կամ Անդամներից պարզաբանումներ ձեռք բերի դրանց առևտրային քաղաքականության միջոցների և գործելակերպերի վերաբերյալ:

vi) Վերաքննության մեջ գտնվող Անդամի և Քարտուղարության զեկուցագրերը՝ ԱԲՎՄ-ի համապատասխան ժողովի արձանագրության հետ միասին շտապ կարգով հրապարակվում են վերաքննությունից հետո:

vii) Այդ փաստաթղթերն ուղարկվում են Նախարարական համաժողով, որը դրանք ընդունում է ի գիտություն:

## Դ. Հաշվետվությունը

Թափանցիկության հնարավորինս ամենամեծ աստիճանի հասնելու համար յուրաքնչյուր Անդամ պարբերաբար զեկուցում է ԱԲՎՄ-ին: Ամբողջական զեկուցագրերում նկարագրվում են այն առևտրային քաղաքականության միջոցներն ու գործելակերպերը, որոնք իրականացնում են տվյալ Անդամը կամ Անդամները՝ հիմնվելով այն համաձայնեցված ձևի վրա, որը որոշում է ԱԲՎՄ-ն: Այդ ձևը սկզբնապես հիմնվում է 1989թ. հուլիսի 19-ի որոշմամբ սահմանված՝ Երկրների զեկուցագրերի ուրվագիր ձևի (BISD 36S/406-409) վրա՝ անհրաժեշտության դեպքում փոփոխելով այն, որպեսզի զեկուցագրերն ընդգրկեն առևտրային քաղաքականության միջոցների բոլոր այն հարցերը, որոնք ընկնում են 1-ին Հավելվածի Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերի և, կիրառելիության դեպքում, Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերի տակ: ԱԲՎՄ-ն, ելնելով փորձից, կարող է վերանայել այդ ձևը: Վերաքննությունների արանքում Անդամները համառոտ զեկուցագրեր են ներկայացնում, եթե որևէ նշանակալի փոփոխություն է կատարվում նրանց առևտրային քաղաքականության մեջ. տարին մեկ քարմացված վիճակագրական տեղեկությունները կտրամադրվեն համաձայնեցված ձևին համապատասխան: Հաշվի են առնվում հատկապես այն դժվարությունները, որոնց հանդիպում են առավել թույլ զարգացած Անդամ երկրներն իրենց զեկուցագրերը կազմելիս: Պահանջ լինելու դեպքում Քարտուղարությունը տեխնիկական աջակցություն է տրամադրում զարգացող Անդամ երկրներին և հատկապես առավել թույլ զարգացած Անդամ երկրներին: Չեկուցագրերում պարունակվող տեղեկությունները պետք է հնարավորին չափ համաձայնեցված լինեն ծանուցումների հետ, որոնք կատարվել են համաձայն Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերի և, կիրառելիության դեպքում, Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերի դրույթների:

## Ե. Կապը ՄԱԳ-Հ-1994-ի և ԾԱԳ-Հ-ի վճարային հաշվեկշռի վերաբերյալ դրույթների հետ

Անդամներն ընդունում են, որ կարիք կա նվազագույնի հասցնելու այն կառավարությունների ծանրաբեռնվածությունը, որոնք նաև ենթակա են լրիվ խորհրդակցությունների՝ համաձայն ՄԱԳ-Հ-1994-ի կամ ԾԱԳ-Հ-ի վճարային հաշվեկշռի վերաբերյալ դրույթների: Այս առումով՝ ԱԲՎՄ-ի նախագահը, խորհրդակցելով տվյալ Անդամի կամ Անդամների հետ, և Վճարային հաշվեկշռի սահմանափակումների հարցերով հանձնախմբի նախագահի հետ, վարչական միջոցներ է մշակում, որոնք առևտրային քաղաքականության վերաքննությունների շրջանում ներդաշնակեցնում են վճարային հաշվեկշռի շուրջ խորհրդակցությունների ժամանակացանկի հետ, սակայն առևտրային քաղաքականության վերաքննությունը չեն հետաձգում ավելի, քան 12 ամսով:

## Զ. Կառույցի գնահատական

ԱԲՎՄ-ն ԱԲՎԳ-ի գործողության գնահատում է անցկացնում ոչ ուշ, քան ԱՀԿ ստեղծման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ հինգ տարի հետո: Գնահատման արդյունքները կներկայացվեն Նախարարական համաժողովին: Դրանից հետո այն կարող է ԱԲՎԳ-ի գնահատումներ անցկացնել՝ իր որոշած կամ Նախարարական համաժողովի պահանջած պարբերությամբ:

## Է. Միջազգային առևտրային միջավայրի զարգացումների ընդհանուր պատկեր

ԱԲՎՄ-ն տարին մեկ ձեռնարկում է նաև առևտրի բազմակողմ համակարգի վրա ազդող՝ միջազգային առևտրային միջավայրի զարգացումների ընդհանուր պատկերման աշխատանքներ: Ընդհանուր պատկերման աշխատանքն օժանդակվում է Գլխավոր տնօրենի տարեկան զեկուցագրով, որտեղ նշվում են ԱՀԿ-ի հիմնական աշխատանքները, և պարզաբանվում են առևտրային համակարգի վրա ազդող՝ քաղաքականության կարևոր հարցերը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4

### ԱՌԵՎՏՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ-ԿԱՄԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

#### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԴԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

1979թ. ապրիլի 12-ին Ժնևում կնքված՝ Քաղաքացիական օդագնացության առևտրի մասին համաձայնագրիը (BISD 26S/162), ինչպես այն փոփոխվել, շտկվել կամ լրացվել է հետագայում:

#### ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

1994թ. ապրիլի 15-ին Մարաքեշում կնքված՝ Պետական գնումների մասին համաձայնագիրը:

#### ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

1994թ. ապրիլի 15-ին Մարաքեշում կնքված՝ Կաթնամթերքի մասին միջազգային համաձայնագիրը:

#### ՏԱՎԱՐԻ ՄՍԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

1994թ. ապրիլի 15-ին Մարաքեշում կնքված՝ Տավարի մսի մասին միջազգային համաձայնագիրը: